ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանուն- Անի Մալոյան, Գայանե Համբարյան, Դիանա Վարդումյան

2. Զբաղեցրած պաշտոնը- Անի Մալոյան՝ Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ: Գայանե Համբարյան՝ Առողջապահության և սոցիալական հարցերի վարչության խորհրդական: Դիանա Վարդումյան՝ մարզպետի տեղակալի օգնական:

3. Գործուղման վայրը և ժամկետները- Սլովենիայի Հանրապետություն, Դեբելի Ռտիչ առողջարան, 2026 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 9-ը:

4. Հրավիրող կողմը- ITF Մարդկային անվտանգության ամրապնդման հիմնադրամ: Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Հանրապետության և Սլովենիայի Հանրապետության Կառավարությունների համագործակցությամբ:

5. Գործուղման նպատակները- Սլովենիայի Կարմիր խաչի մանկական առողջարանում իրականացվող՝ ռազմական գործողություններից տուժած ընտանիքների երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները- Սլովենիայի Կարմիր խաչի մանկական առողջարանում իրականացվող սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել են տարբեր բնույթի միջոցառումներ ու աշխատանքներ՝ ուղղված ռազմական գործողություններից տուժած ընտանիքների երեխաների հոգեբանական աջակցությանն ու հուզական վերականգնմանը:
Ծրագրին մասնակցել է 16 երեխա, որոնց համար կազմակերպվել են հոգեբանի հետ խմբային հանդիպումներ, հոգեբանական թերապիաներ և տարաբնույթ աշխատանքներ՝ ուղղված երեխաների հուզական վիճակի բարելավմանը, հոգեբանական լարվածության հաղթահարմանը և սոցիալական ներառմանը:
Ծրագրի շրջանակներում երեխաները մասնակցել են նաև լողի դասընթացների, ինչպես նաև կրթական և ճանաչողական բնույթի տարբեր պարապմունքների՝ նվիրված այգեգործությանը, շրջակա միջավայրի պահպանությանը, անդրծովյան կենդանական աշխարհին և հարակից թեմաներին: Իրականացված միջոցառումները միտված են եղել երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանը, նոր հմտությունների ձեռքբերմանը, առողջ ապրելակերպի խրախուսմանը և խմբային միջավայրում ակտիվ ներգրավվածության ապահովմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը- Ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում Չեխիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանի հետ, ով անձամբ այցելել է առողջարանում գտնվող երեխաներին՝ հաշվի առնելով ծրագրում իր անմիջական ներգրավվածությունը:
Բացի այդ, հայկական պատվիրակությունը և ծրագրին մասնակցող երեխաների խումբը մասնակցել են Լյուբլյանա քաղաքում Հայաստանի անկախության 35-ամյակին նվիրված միջոցառմանը՝ որպես պատվավոր հյուրեր: Մասնակցությունը կարևոր հնարավորություն է հանդիսացել Հայաստանի ներկայացվածության, ազգային ինքնության և միջազգային կապերի ամրապնդման տեսանկյունից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները , պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը- Գործուղման շրջանակներում պաշտոնական որոշումներ, պայմանավորվածություններ կամ փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը ժամկետները, պատասխանները, ակնկալվող արդյունքները- Հաշվի առնելով իրականացված ծրագրի դրական արդյունքները, երեխաների սոցիալ-հոգեբանական վիճակի վրա ունեցած բարերար ազդեցությունը և ծրագրի ընթացքում արձանագրված դրական արձագանքները՝ առաջարկվել է ապահովել ծրագրի շարունակականությունը՝ այն դարձնելով պարբերական բնույթ կրող նախաձեռնություն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

17.11.2026թ.